Տնտեսական, արդյունաբերական, գիտական և տեխնիկական համագործակցության հարցերով հայ-լատվիական միջկառավարական համատեղ հանձնաժողով

Տնտեսական, արդյունաբերական, գիտական և տեխնիկական համագործակցության հարցերով հայ-լատվիական միջկառավարական համատեղ հանձնաժողովը հիմնվել է համաձայն 2009թ. դեկտեմբերի 10-ին կնքված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լատվիայի Հանրապետության կառավարության միջև տնտեսական, արդյունաբերական, գիտական և տեխնիկական համագործակցության մասին» Համաձայնագրի: Հայկական կողմից հանձնաժողովի համանախագահն է՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանը: Հայ-լատվիական միջկառավարական հանձնաժողովի անդրանիկ նիստը տեղի է ունեցել 2013թ. հունիսի 28-ին՝ Ռիգայում: Նիստի ընթացքում քննարկվել են Հայաստանի և Լատվիայի միջև առևտրատնտեսական, ներդրումային, ֆինանսական, մշակութային, գյուղատնտեսության, առողջապահության և տարածքային կառավարման ոլորտներում համագործակցության զարգացման հեռանկարները, ԵՄ-ի հետ ընթացիկ համագործակցությանն, ինչպես նաև Հայաստանի և Լատվիայի միջև գործարար կապերի խորացմանն առնչվող հարցերը: Հանձնաժողովի հերթական երկրորդ նիստը նախատեսվում է անցկացնել Երևանում: